

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

ԴԻՄՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ
Ք. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Դ Ի Մ Ո Ւ Մ

«Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

1. Դիմումը ներկայացնելու իրավական հիմքը.

Դիմումը ներկայացվում է՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը, 68-րդ հոդվածի 2-րդ մասը, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասը:

2. Դիմումի առարկան.

Սույն դիմումով վիճարկվում է «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի թիվ ՀՕ-401-Ն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Արհեստակցական միությունների մասին» 2000 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ՀՕ-135 օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 45-րդ և 78-րդ հոդվածներին, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» 2003 թվականի ապրիլի 11-ի թիվ ՀՕ-532-Ն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 41-րդ, 45-րդ և 78-րդ հոդվածներին, ինչպես նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՀՕ-195-Ն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 41-րդ, 45-րդ, 78-րդ, 79-րդ հոդվածներին:

Մասնավորապես, վիճարկվող դրույթներով ոստիկանության, ազգային անվտանգության մարմիններում ծառայողների, զինծառայողների, դատախազների, դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների համար սահմանվում է արհեստակցական միություններին անդամակցելու, ազգային անվտանգության մարմիններում ծառայողների համար նաև՝ կրոնական կազմակերպություններին անդամակցելու, իսկ զինծառայողների համար՝ կրոնական միավորում ստեղծելու բացարձակ արգելք՝ հանգեցնելով վերոնշյալ անձանց կրոնի ազատության և միավորումների ազատության անհամաչափ սահմանափակման:

3. Դիմումով վիճարկվող իրավական դրույթները.

«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքն ընդունվել է 2002 թվականի հուլիսի 3-ին, ուժի մեջ մտել՝ 2003 թվականի հունվարի 1-ին: Օրենքի վիճարկվող նորմի բովանդակությունը հետևյալն է.

«Հոդված 39. Ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Ոստիկանության ծառայողն իրավունք չունի՝

(...)

7) լինել որևէ կուսակցության, հասարակական-քաղաքական, հասարակական (բացառությամբ գիտական, մշակութային, մարզական, որսորդական, վետերանների և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման վրա միավորված կազմակերպությունների), այդ թվում՝ կրոնական, արհեստակցական կազմակերպության անդամ իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել.

(...)»:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքն ընդունվել է 2003 թվականի ապրիլի 11-ին, ուժի մեջ մտել՝ նույն թվականի հունիսի 1-ին: Օրենքի վիճարկվող նորմի բովանդակությունը հետևյալն է.

«Հոդված 43. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Ազգային անվտանգության մարմինների ծառայողն իրավունք չունի՝

(...)

8) լինել որևէ կուսակցության, հասարակական (բացառությամբ գիտական, մշակութային, մարզական, որսորդական և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման վրա միավորված կազմակերպությունների), այդ թվում՝ կրոնական, արհեստակցական կազմակերպության անդամ.

(...)»:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքն ընդունվել է 2017 թվականի նոյեմբերի 15-ին, ուժի մեջ մտել՝ նույն թվականի դեկտեմբերի 16-ին: Օրենքի վիճարկվող նորմի բովանդակությունը հետևյալն է.

«Հոդված 8. Զինվորական ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Զինճառայողն իրավունք չունի՝

(...)

3) ստեղծելու կուսակցություններ կամ կրոնական միավորումներ, անդամակցելու որևէ կուսակցության կամ արհեստակցական միության, իսկ կրոնական միավորման անդամ հանդիսանալու դեպքում զինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնելու քարոզչական գործունեություն.

(...)»:

«Արհեստակցական միությունների մասին» օրենքն ընդունվել է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին, ուժի մեջ մտել՝ 2001 թվականի հունվարի 15-ին: Օրենքի վիճարկվող նորմի բովանդակությունը հետևյալն է.

«Հոդված 6. Արհեստակցական կազմակերպության մասնակիցները (անդամները)

(...)

Արհեստակցական կազմակերպության մասնակից (անդամ) չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողները, ինչպես նաև դատավորները և Սահմանադրական դատարանի դատավորները:

(...)»:

4. ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածները.

«Հոդված 41. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը:

2. Մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

(...)»:

«Հոդված 45. Միավորումների ազատությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ մասնավոր միավորման:

(...)

3. Միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

(...)»:

«Հոդված 78. Համաչափության սկզբունքը

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:»:

«Հոդված 79. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով

որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:»:

5. Սույն դիմումում վիճարկվող օրենսդրական դրույթների ոչ իրավաչափությունը՝ սահմանադրական իրավունքների երաշխավորման տեսանկյունից.

Վիճարկվող նորմերի սահմանադրականության հարցը պետք է դիտարկել մտքի, խղճի, կրոնի ազատության և միավորումների ազատության վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումների, այդ ազատություններն ամրագրող՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի, այլ միջազգային իրավական փաստաթղթերի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համատեքստում:

5.1. Արհեստակցական միությանն անդամակցելու արգելքի սահմանադրականությունը.

Նախ պետք է փաստել, որ ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով ամրագրվում է **յուրաքանչյուր անձի՝** այլոց հետ միավորվելու, ներառյալ՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը՝ առանց բացառությունների:

Այսպես, Սահմանադրական դատարանը 2020 թվականի փետրվարի 18-ի ՍԴՌ-1506 որոշմամբ, դիտարկելով «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով ամրագրված՝ ոստիկանության ծառայողի՝ կրոնական կազմակերպությանն անդամակցելու բացարձակ արգելքի սահմանադրականության հարցը, քննարկել է այն ոչ միայն ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի՝ մտքի, խղճի, կրոնի ազատությանը, այլև 45-րդ հոդվածով երաշխավորված միավորումների ազատությանը համապատասխանության տեսանկյունից: Այս համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ի տարբերություն նույնպես միավորման տարատեսակ հանդիսացող կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու հիմնական իրավունքի, որը սահմանափակվում է Սահմանադրության մեջ ուղղակիորեն

նշված սուբյեկտային կազմի համար (դատավորներ, դատախազներ և քննիչներ), կամ Սահմանադրության մեջ հիշատակվում են այլ սուբյեկտներ, որոնց համար օրենքով կարող են սահմանվել այդ իրավունքի սահմանափակումներ (զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողներ), կրոնական կազմակերպությանն անդամակցելու որևէ հատուկ՝ սուբյեկտային սահմանափակում Սահմանադրությունում ամրագրված չէ:

Այս նորմերի համակարգային վերլուծությամբ Սահմանադրական դատարանը փաստել է, որ եթե սահմանադրի համար ռազմականացված մարմիններում ծառայողների համար կրոնական **կամ այլ միավորմանն անդամակցելու ազատությունը սահմանափակելու ուղղակի անհրաժեշտություն առաջացած լիներ**, սահմանադիրը կանդրադառնար նաև այդ հարցին՝ առնվազն նման սուբյեկտների համար օրենսդրին թույլատրելով հենց այդ հիմքով սահմանափակումներ նախատեսելու հատուկ հնարավորություն:

Վկայակոչված գործով Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ կրոնական կազմակերպություններին անդամակցելը՝ որպես կրոնի ազատության արտահայտման ձև **և միաժամանակ միավորման ազատության իրականացման եղանակ**, կախված չէ որևէ ռազմականացված մարմնում ծառայելու փաստից, այդ թվում՝ ոստիկանությունում: Ուստի, սուկ ոստիկանությունում ծառայելու փաստը ինքնին չի կարող լինել կրոնական կազմակերպությանն անդամակցության արգելքի հիմք, **նման արգելքի համար անհրաժեշտ են ավելի լուրջ նախադրյալներ, առնվազն՝ Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ և 45-րդ հոդվածի 3-րդ մասում նշված նախադրյալներից որևէ մեկի առկայությունը և դրա գերակայությունը ոստիկանության ծառայողի կրոնի ազատության արտահայտման և միավորման ազատության նկատմամբ:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն փաստը, որ սահմանադիրը կրոնի ազատության արտահայտման և **միավորման ազատության սահմանափակումները չի պայմանավորել որևէ սուբյեկտի կարգավիճակով կամ նրա ծառայության առանձնահատկություններով**, ուղղակիորեն հաստատում է, որ **սահմանադիրը չի փարբերակել կրոնի ազատության և կրոնական կազմակերպություններին անդամակցելու իրավունքի սուբյեկտներին՝ ըստ նրանց կարգավիճակի կամ հանրային**

ծառայության մեջ գտնվելու հանգամանքի կամ առանձնահատկությունների: Ուստի ուստիկանությունում ծառայողների քաղաքական չեզոքությունը կարող է ապահովվել օրենքով ամրագրված տարբեր ինտենսիվությամբ սահմանափակումներ սահմանելու միջոցով, ընդամին՝ այս խմբի ծառայողների համար ուղղակի արգելքի բացակայությունը Սահմանադրության տեքստում նշանակում է, որ սահմանափակումները չպետք է պարտադիր ձևակերպվեն առավել խիստ միջոցի՝ արգելքի ընտրությամբ:

Վերոգրյալի համատեքստում հարկ է փաստել, որ Սահմանադրության 45-րդ հոդվածով բացառություններ չեն սահմանվում ոչ միայն կրոնական կազմակերպություններին, այլև առհասարակ ցանկացած միավորմանը, ներառյալ՝ արհեստակցական միություններին անդամակցելու իրավունքի սուբյեկտային շրջանակից, ինչից ելնելով՝ կարող ենք եզրակացնել, որ ՀՀ ուստիկանության, ազգային անվտանգության մարմինների ծառայողների, դատախազների, դատավորների, Սահմանադրական դատարանի դատավորների և զինծառայողների (այսուհետ միասին՝ ծառայողներ)՝ միավորումների ազատության իրավունքի քննարկվող սահմանափակումները կարող են իրավաչափ լինել, միայն եթե առկա է 45-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նպատակներից որևէ մեկը և եթե սահմանափակումը բավարարում է Սահմանադրության 78-րդ հոդվածով ամրագրված համաչափության սկզբունքի պահանջներին, այլ խոսքերով՝ այն պիտանի և անհրաժեշտ է Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար, ինչպես նաև համարժեք է սահմանափակվող ազատության նշանակությանը:

Ասվածը հիմնավորվում է նաև միավորումների ազատության կոնվենցիոն պաշտպանության մեխանիզմները դիտարկելիս: Այսպես, միավորումների ազատությունը, այդ թվում՝ արհեստակցական միություններ ձևավորելու և դրանց անդամակցելու իրավունքը, երաշխավորվում է ինչպես «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 22-րդ, այնպես էլ «Մարդու իրավունքների և եվրոպական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ եվրոպական կոնվենցիա) 11-րդ հոդվածով: Բացի այդ, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 8-րդ հոդվածը սահմանում է տնտեսական և սոցիալական շահերի իրականացման և պաշտպանության

համար արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը, իսկ Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի (այսուհետ՝ Եվրոպական խարտիա) 5-րդ հոդվածով սահմանվում է իրենց տնտեսական և սոցիալական շահերի պաշտպանության համար տեղական, ազգային կամ միջազգային կազմակերպություններ ստեղծելու և այդ կազմակերպություններին միանալու՝ աշխատողների և գործատուների ազատությունը:

Աշխատանքի միջազգային կազմակերպության «Միավորումների ազատության և միավորվելու իրավունքի պաշտպանության մասին» 1948 թվականի թիվ 87 կոնվենցիայի (այսուհետ՝ ԱՄԿ N 87 կոնվենցիա) 2-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողներն ու գործատուները, առանց որևէ տարբերակման, պետք է իրավունք ունենան ստեղծելու կազմակերպություններ և կազմակերպության կանոններին համապատասխան անդամակցելու դրան առանց նախնական թույլտվության:

Վկայակոչված բոլոր փաստաթղթերով սահմանվում է ոստիկանությունում և զինված ուժերում ծառայողների՝ միավորումների ազատության սահմանափակման հնարավորություն: Այսպես, դաշնագրերը և Եվրոպական կոնվենցիան պարունակում են գրեթե նույնական դրույթ առ այն, որ դաշնագրի կամ Եվրոպական կոնվենցիայի համապատասխան հոդվածը չպետք է խոչընդոտի ոստիկանության և զինված ուժերի (Եվրոպական կոնվենցիայի դեպքում՝ նաև պետության վարչակազմի) իրավունքների իրացման սահմանափակումների նախատեսումը: Եվրոպական խարտիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ հոդվածում նախատեսված երաշխիքների՝ ոստիկանության նկատմամբ կիրառման չափը պետք է սահմանվի ազգային օրենքներով և կանոնակարգերով, իսկ զինված ուժերի անդամների նկատմամբ այս երաշխիքների կիրառումը կարգավորող սկզբունքը և այն չափը, որով դրանք կկիրառվեն այս կատեգորիայի անձանց նկատմամբ, պետք է նմանապես սահմանված լինեն ազգային օրենքներով կամ կանոնակարգերով: ԱՄԿ N 87 կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝ սույն կոնվենցիայով նախատեսված երաշխիքների՝ ոստիկանության և զինված ուժերի նկատմամբ կիրառելիության աստիճանը պետք է որոշվի ազգային օրենքներով և կարգավորումներով:

Հարկ է արձանագրել, որ վկայակոչված բոլոր համաձայնագրերից միայն Եվրոպական կոնվենցիան է, որ ուղղակիորեն նախատեսում է ոչ միայն ոստիկանության ծառայողների և զինծառայողների, այլև այլ հանրային ծառայողների (պետական վարչակազմի) նկատմամբ միավորումների ազատության իրավունքի սահմանափակման հնարավորություն:

Ուստի, նպատակահարմար ենք գտնում անջատ դիտարկել դատախազների և դատավորների միավորումների ազատության սահմանափակումը ռազմականացված կառույցների՝ ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների և զինված ուժերի ծառայողների ազատության սահմանափակումից:

ա) Ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների և զինված ուժերի ծառայողների՝ արհեստակցական միություն ստեղծելու և դրան անդամակցելու իրավունքի սահմանափակումը.

Հարկ է նկատել, որ վերոնշյալ միջազգային պայմանագրերով նախատեսված՝ ազգային օրենսդրությամբ միավորումների ազատության սահմանափակման հնարավորությունը չի կարող մեկնաբանվել այնպես, որ ծառայողների միավորումների ազատության իրավունքի իրացման բացարձակ արգելքի սահմանումը համարվի միավորումների ազատության բուն էությանը համահունչ:

Այսպես, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը հանգում է նրան, որ Եվրոպական կոնվենցիան չի տարբերակում պետության գործառույթները՝ որպես հանրային իշխանության կրողի և որպես գործատուի: Ուստի, պետությունները պարտավոր են հարգել իրենց աշխատողների (այլ խոսքերով՝ հանրային ծառայողների) միավորումների ազատության իրավունքը, որը կարող է ենթարկվել իրավաչափ սահմանափակումների զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի դեպքում: Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածը, հետևաբար, կիրառելի է պետության՝ որպես գործատուի նկատմամբ նույնպես¹:

¹ Տե՛ս Դեմիրը և Բայկարան ընդդեմ Թուրքիայի (Demir And Baykara v. Turkey) գործով 2008 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, դիմում no. 34503/97, § 96, Թում Հաբեր Սեն և Չինարն ընդդեմ Թուրքիայի (Tüm Haber Sen and Çınar v. Turkey) գործով 2006 թվականի փետրվարի 21-ի վճիռը, դիմում no. 28602/95, § 29, Սլովակիայի Հանրապետության ոստիկանության արհեստակցական միությունը և այլք ընդդեմ Սլովակիայի (Trade Union of the Police in the Slovak Republic and Others v. Slovakia) գործով 2012 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, դիմում no. 11828/08, § 56:

Այս կապակցությամբ Եվրոպական դատարանը փաստել է, որ Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետը չի բացառում հոդվածի կիրառելիությունը որևէ մասնագիտական խմբի նկատմամբ, իսկ վերոնշյալ երեք խմբերի նկատմամբ կիրառվող սահմանափակումները պետք է խիստ մեկնաբանվեն և տարածվեն քննարկվող իրավունքների իրացման շրջանակի վրա՝ առանց խաթարելու միավորվելու իրավունքի բուն էությունը²: Մեկնաբանելով Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետով օգտագործվող «իրավաչափ սահմանափակումներ» տերմինը՝ Եվրոպական դատարանը փաստել է, որ իրավաչափության պահանջը չի կարող բավարարված համարվել միայն այն հիմքով, որ սահմանափակումը նախատեսվել է օրենքով և հայեցողական չէ, այսինքն՝ քննարկվող դրույթի իմաստով սահմանափակումը կհամարվի իրավաչափ, միայն եթե այն համապատասխանում է համաչափության պահանջին:

Այլ խոսքերով, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ խմբերի միավորումների ազատության յուրաքանչյուր սահմանափակման դեպքում պետք է հիմնավորվի, որ այն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում, այն է՝ պայմանավորված է խիստ հասարակական անհրաժեշտությամբ (pressing social need) և համաչափ է հետապնդվող իրավաչափ նպատակին:

Վերոգրյալի համատեքստում Եվրոպական դատարանը փաստել է, որ պետությունը պետք է հիմնավորի կիրառված սահմանափակումների անհրաժեշտությունը՝ ելնելով տվյալ ծառայության տեսակի, ծառայողների կողմից իրականացվող պարտականությունների բնույթից³:

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն (այսուհետ՝ Եվրոպական կոմիտե), գնահատելով ֆրանսիական Ժանդարմերիայի անդամների՝ արհեստակցական

² Տե՛ս 'u Թում Հաբեր Սեն և Չինարն ընդդեմ Թուրքիայի (Tüm Haber Sen and Çinar v. Turkey) գործով 2006 թվականի փետրվարի 21-ի վճիռը, դիմում no. 28602/95, § 35, «Junta Rectora del Ertzainen Nazional Elkartasuna (Er.N.E.)»-ն ընդդեմ Իսպանիայի (Junta Rectora del Ertzainen Nazional Elkartasuna (Er.N.E.) v. Spain) գործով 2015 թվականի ապրիլի 21-ի վճիռ, դիմում no. 45892/09, §§ 29-30, Ադեֆդրոմիլն ընդդեմ Ֆրանսիայի (Adefdromil v. France) գործով 2014 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, դիմում no. 32191/09, §§ 42-43, Մատելլին ընդդեմ Ֆրանսիայի (Matelly v. France) գործով 2014 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, դիմում no. 10609/10, §§ 56-57:

³ Տե՛ս 'u Դեմիրը և Բայկարան ընդդեմ Թուրքիայի (Demir And Baykara v. Turkey) գործով 2008 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, դիմում no. 34503/97, §§ 97, 107, 119:

միություններ ստեղծելու իրավունքի սահմանափակումները, արձանագրել է, որ Եվրոպական խարտիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ այդ հոդվածով նախատեսված երաշխիքների կիրառելիության չափը ոստիկանության նկատմամբ պետք է որոշվի ազգային օրենսդրությամբ: Միաժամանակ, Եվրոպական կոմիտեն նշել է, որ վկայակոչված դրույթը պետք է դիտարկել Եվրոպական խարտիայի Է (G) հոդվածի համատեքստում, համաձայն որի՝ Եվրոպական խարտիայի 1-ին մասում շարադրված յուրաքանչյուր իրավունքի սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով, անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և անհրաժեշտ լինի սահմանված իրավաչափ նպատակներից առնվազն մեկի, տվյալ դեպքում՝ ազգային անվտանգության պաշտպանության համար⁴:

Միավորումների ազատության վերաբերյալ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) և ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (այսուհետ՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) համատեղ ուղեցույցով (այսուհետ՝ Ուղեցույց) նույնպես նշվում է, որ միավորումների ազատության սահմանափակումները պետք է համապատասխանեն համաչափության թեստին, այսինքն՝ սահմանափակումների շրջանակը պետք է ներառի իրավունքի իրացմանը նվազ միջամտող միջոցները: Ավելին, սահմանափակումները երբեք չպետք է վերացնեն իրավունքը կամ զրկեն այն իր էությունից:

Ուղեցույցի համաձայն՝ միավորումների ազատության ցանկացած սահմանափակում պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և համարժեք լինի իրավաչափ նպատակին: Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտության սկզբունքը ենթադրում է միավորումների ազատության իրավունքն իրացնող անձանց, միավորումների շահերի և հանրային շահի հավասարակշռում: Այդ իսկ պատճառով, սահմանափակումների անհրաժեշտությունը պետք է կշռադատված լինի և հիմնված լինի համոզիչ ապացույցների վրա: Իրավունքի իրացմանը նվազ միջամտություն կազմող

⁴ Տե՛ս Ոստիկանության արհեստակցական միությունների Եվրոպական խորհուրդն ընդդեմ Ֆրանսիայի (European Council of Police Trade Unions (CESP) v. France) գործով 2016 թվականի հունվարի 27-ի ըստ էության որոշում, բողոք no. 101/2013, § 61:

տարբերակը պետք է ընտրվի, և սահմանափակումը պետք է ենթարկվի նեղ մեկնաբանության և կիրառման⁵:

Խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողը ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդին ներկայացված իր զեկույցում ևս նշել է, որ մարդու իրավունքների միջազգային իրավունքի համաձայն՝ զինված ուժերում և ոստիկանությունում ծառայողների՝ միավորումների ազատությունը կարող է ենթարկվել իրավաչափ սահմանափակումների՝ միաժամանակ փաստելով, որ այդ սահմանափակումները պետք է համապատասխանեն պետության՝ մարդու իրավունքներին առնչվող միջազգային պարտավորություններին, և ընդհանուր (բլանկետային) սահմանափակումները չպետք է համարվեն իրավաչափ⁶:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավական մեխանիզմների մեկնաբանությունից բխում է, որ ոստիկանությունում, զինված ուժերում և այլ ռազմականացված մարմիններում (ներառյալ՝ ազգային անվտանգության մարմիններում) ծառայողների միավորումների ազատության սահմանափակումն ուղղակիորեն չի բխում այդ ազատության բուն էությունից, ուստի և այդ ազատությունը սահմանափակող յուրաքանչյուր միջոցի սահմանադրականությունը պետք է քննարկվի իրավաչափ նպատակի առկայության և կիրառված միջոցների համաչափության գնահատման համատեքստում:

Անդրադառնալով սահմանափակման իրավաչափ նպատակի առկայության հարցին՝ նախ հարկ է փաստել, որ ենթադրվում է, որ ոստիկանության և ազգային անվտանգության մարմիններում ծառայողների, ինչպես նաև զինծառայողների՝ արհեստակցական միությանն անդամակցելու արգելքը նախատեսվել է՝ ելնելով պետական անվտանգության և հասարակական կարգի ապահովման իրավաչափ նպատակներից՝ հաշվի առնելով

⁵ Տե՛ս Միավորումների ազատության վերաբերյալ համատեղ ուղեցույց, Վենետիկի հանձնաժողով և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, 2014 թվականի դեկտեմբերի 12-13, կետեր 24, 35, հասանելի՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)046-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)046-e) (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

⁶ Տե՛ս Խաղաղ իրավունքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողի զեկույց, Մաինա Կիաի, 2012 թվականի մայիսի 21, A/HRC/20/27, հասանելի՝ https://www.ohchr.org/sites/default/files/Documents/HRBodies/HRCouncil/RegularSession/Session20/A-HRC-20-27_en.pdf (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

Ոստիկանության՝ մարդու անվտանգությունը, հասարակական կարգի պահպանությունն ու հասարակական անվտանգությունն ապահովելու⁷, ազգային անվտանգության մարմինների՝ անձի, հասարակության ու պետության անվտանգությունն ապահովելու գործառույթները⁸, ինչպես նաև զինված ուժերի՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունն ապահովելու սահմանադրական առաքելությունը⁹:

Միաժամանակ, անհրաժեշտ ենք համարում այս նպատակներին հասնելու համար կիրառված միջոցների անհրաժեշտությունն ու պիտանիությունը դիտարկել միավորումների ազատության և մասնավորապես՝ արհեստակցական միությունների ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքի բուն էության և նշանակության մեկնաբանման համատեքստում:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 22-րդ և Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածների դրույթներից բխում է, որ արհեստակցական միությունների ստեղծման և դրանց անդամակցելու նպատակն **անձանց շահերի պաշտպանությունն է**: «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ անձինք պետք է ունենան արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունք **սոցիալ-տնտեսական շահերի իրացման և պաշտպանության, իսկ Եվրոպական խարտիայի համաձայն՝ սոցիալ-տնտեսական շահերի պաշտպանության և աշխատողների ազատության ապահովման նպատակով**:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 18-րդ ընդհանուր մեկնաբանությունում արձանագրել է, որ արհեստակցական միությունները հիմնարար դեր են կատարում ինչպես տեղական, այնպես էլ ազգային մակարդակներում

⁷ Տե՛ս «Ոստիկանության մասին» օրենքի 2-րդ հոդված:

⁸ Տե՛ս «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 2-րդ հոդված:

⁹ Տե՛ս ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին մաս:

աշխատանքի իրավունքի նկատմամբ հարգանքն ապահովելու գործում և աջակցում են պետություններին՝ կատարելու դաշնագրի դրույթներից բխող պարտավորությունները¹⁰:

Եվրոպական դատարանը մի շարք գործերով արձանագրել է, որ Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածը երաշխավորում է **արհմիութենական գործունեությամբ աշխատողների շահերը պաշտպանելու**՝ արհեստակցական միությունների անդամների իրավունքը, որը պետությունները պետք է թույլատրեն և հնարավոր դարձնեն¹¹: Եվրոպական դատարանը շեշտել է, որ արհեստակցական միությունների ազատությունը աշխատողների և գործատուների միջև սոցիալական երկխոսության էական բաղադրիչն է, ուստիև՝ այն կարևոր գործիք է **սոցիալական արդարությանը և ներդաշնակությանը հասնելու տեսանկյունից**¹²:

Արհեստակցական միությունների գործունեության կարևորությունը շեշտվել է նաև Ուղեցույցում, որում նշվում է, որ արհեստակցական միությունների ստեղծման իրավունքը պատմականորեն ծառայել է որպես ժողովրդական բարեփոխումների և ընդհանուր առմամբ, պետությունների զարգացման կատալիզատոր: Ուղեցույցը բնորոշում է արհեստակցական միությունները որպես կազմակերպություններ, որոնց միջոցով **աշխատողները ձգտում են նպաստել իրենց ընդհանուր շահերի իրացմանը և պաշտպանել դրանք**¹³:

¹⁰ Տե՛ս Ընդհանուր մեկնաբանություն No. 18, «Աշխատանքի իրավունքը», Դաշնագրի 6-րդ հոդված, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, 2005 թվականի նոյեմբերի 24, E/C.12/GC/18, հասանելի՝ <https://www.refworld.org/docid/4415453b4.html> (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

¹¹ Տե՛ս Սլովակիայի Հանրապետության ոստիկանության արհեստակցական միությունը և այլք ընդդեմ Սլովակիայի (Trade Union of the Police in the Slovak Republic and Others v. Slovakia) գործով 2012 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, դիմում no. 11828/08, § 54, Հաբեր Սեն և Չինարն ընդդեմ Թուրքիայի (Tüm Haber Sen and Çinar v. Turkey) գործով 2006 թվականի փետրվարի 21-ի վճիռը, դիմում no. 28602/95, § 28, Մատելլին ընդդեմ Ֆրանսիայի (Matelly v. France) գործով 2014 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, դիմում no. 10609/10, § 55:

¹² Տե՛ս Սինդիկատուլ «Պաստորուլ չել բուն»-ն ընդդեմ Ռումինիայի (Sindicatul "Păstorul Cel Bun" v. Romania) գործով 2013 թվականի հուլիսի 9-ի վճիռը, դիմում no. 2330/09, §§ 130-131:

¹³ Տե՛ս Միավորումների ազատության վերաբերյալ համատեղ ուղեցույց, Վենետիկի հանձնաժողով և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, 2014 թվականի դեկտեմբերի 12-13, կետեր 14, 58, հասանելի՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)046-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)046-e) (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

Աշխատանքի միջազգային կազմակերպության սահմանադրության նախաբանով միավորումների ազատության սկզբունքի ճանաչումը սահմանվում է այն միջոցների թվում, որոնց ձեռնարկումը կնպաստի աշխատանքային պայմանների բարելավմանը:

Անդրադառնալով արհեստակցական միությունների գործունեության նպատակներին և նշանակությանը՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության միավորումների ազատության կոմիտեն (այսուհետ՝ ԱՄԿ կոմիտե) նշել է, որ **արհմիութենական շարժման հիմնարար նպատակը պետք է լինի բոլոր աշխատողների սոցիալական և տնտեսական բարեկեցության ապահովումը:**

Սրանից ելնելով էլ արհեստակցական միությունների գործունեությունը չի կարող սահմանափակվել միայն զբաղվածության հարցերով՝ նկատի ունենալով, որ ոլորտում տարվող ընդհանուր քաղաքականությանը վերաբերող որոշումներն անպայմանորեն աշխատողների վիճակի վրա են անդրադառնալու, ուստի *աշխատողների կազմակերպությունների կողմից պաշտպանվող շահերը կարող են առնչվել նաև սոցիալ-տնտեսական քաղաքականության հարցերի և աշխատողներին անմիջականորեն վերաբերող՝ ձեռնարկությունների առջև ծառայած խնդիրների լուծմանը*¹⁴:

«Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ *արհեստակցական կազմակերպությունը հասարակական միավորում է, որն օրենքով սահմանված կարգով և ազատ կամքի դրսևորմամբ միավորում է տվյալ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողներին՝ իրենց աշխատանքային ու դրա հետ կապված մասնագիտական, տնտեսական, սոցիալական իրավունքներն ու շահերը ներկայացնելու և աշխատանքային հարաբերություններում դրանք պաշտպանելու նպատակով:*

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ արհեստակցական միությունների գործունեության հիմնական նպատակներն են՝

¹⁴ Տե՛ս Աշխատանքի միջազգային կազմակերպության միավորումների ազատության կոմիտեի որոշումների ժողովածու, վեցերորդ հրատարակություն, 2018, կետեր 62-65, հասանելի՝ https://www.ilo.org/wcmsp5/groups/public/--ed_norm/--normes/documents/publication/wcms_632659.pdf (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ):

1) աշխատողների աշխատանքային իրավունքների և շահերի ներկայացումն ու պաշտպանությունը,

2) աշխատանքային հարաբերություններին առնչվող սոցիալ-տնտեսական քաղաքականության հարցերի հասցեագրումը՝ աշխատողների սոցիալական բարեկեցությունն ապահովելու նպատակով:

Ընդ որում, վերոգրյալից ելնելով՝ կարող ենք եզրակացնել նաև, որ արհեստակցական միությունները ծառայում են որպես աշխատողների անհատական և կոլեկտիվ իրավունքների պաշտպանության, ինչպես նաև նրանց սոցիալական բարեկեցության ապահովման հիմնական և առավել արդյունավետ մեխանիզմ: Արհեստակցական միությունների ստեղծումն, այսպիսով, բոլոր աշխատողների հիմնարար իրավունքն է, որից վերջիններիս զրկումը կարող է էականորեն խաթարել գործատուի և աշխատողների միջև կայուն և բնականոն երկխոսությունը, ինչն իր հերթին կառաջացնի գործատուի կողմից աշխատողների իրավունքների խախտման և վերջիններիս նվազ պաշտպանվածության ռիսկեր:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ խնդրո առարկա արգելքը բացառում է Ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների ծառայողների, ինչպես նաև զինծառայողների արհեստակցական միությունների ստեղծումը, հետևաբար նաև՝ գործատուի հետ իրավահարաբերություններում աշխատանքային իրավունքների պաշտպանության այդ մեխանիզմից օգտվելու հնարավորությունը: Նման պայմաններում կարծում ենք, որ քննարկվող արգելքը պետք է ունենա հատկապես հիմնավոր և ծանրակշիռ արդարացումներ:

Այս առումով կարևոր է փաստել, որ, ինչպես արդեն նշվեց, Եվրոպական դատարանն անընդունելի է համարում միավորումների ազատության այնպիսի սահմանափակումները, որոնք անդրադառնում են դրա էական բաղադրիչների վրա, առանց որոնց այս ազատությունը զրկված կլինի իր բուն էությունից:

Դիտարկելով Ֆրանսիայի զինված ուժերում ծառայողների կողմից արհեստակցական միությունների ստեղծման և դրանց անդամակցելու բացարձակ արգելքը՝ Եվրոպական դատարանը նշել է, որ թեև ընդունելի է համարում, որ զինված ուժերում միավորումների

ազատության, ներառյալ՝ արհեստակցական միությունների գործունեությանն առնչվող սահմանափակումները կարող են հետապնդել հասարակական կարգի ապահովման իրավաչափ նպատակը, միաժամանակ, արհեստակցական միություն կազմելու և դրան անդամակցելու ուղղակի արգելքը որևէ դեպքում չի կարող Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի իմաստով «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» միջոց համարվել:

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ զինված ուժերում մասնագիտական միությունների գործունեության, դրանց անդամակցության առնչությամբ կարող են նախատեսվել էական սահմանափակումներ: Նման սահմանափակումները, սակայն, չպետք է զրկեն զինծառայողներին և նրանց արհեստակցական միություններին իրենց մասնագիտական և բարոյական շահերի պաշտպանության նպատակով միավորումների ազատությունն իրացնելու իրավունքից:

Ամփոփելով Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ նման արգելքը չի ապահովում տվյալ դեպքում միմյանց հակադրվող հանրային շահի և անձանց՝ միավորումների ազատությունն իրացնելու իրավունքի միջև հավասարակշռումը¹⁵:

Եվրոպական կոմիտեի նախադեպային իրավունքից ևս բխում է, որ պետությունները կարող են սահմանափակել, սակայն ոչ ամբողջովին մերժել ոստիկանության ծառայողների և զինծառայողների միավորումների ազատության իրավունքը:

Այսպես, Եվրոպական կոմիտեն նշել է, որ ոստիկանության անձնակազմը պետք է հնարավորություն ունենա իր նյութական և ոչ նյութական շահերի պաշտպանության նպատակով ստեղծելու կազմակերպություններ և անդամակցելու դրանց: Եվրոպական խարտիան պահանջում է, որ անդամ պետությունների օրենսդրությունը բացառի որևէ կարգավորման կամ իրավակիրառ պրակտիկայի առկայությունը, որը կխաթարի գործատուների և աշխատողների՝ կազմակերպություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

¹⁵ Տե՛ս Ադեֆդրոմիլն ընդդեմ Ֆրանսիայի (Adefdromil v. France) գործով 2014 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, դիմում no. 32191/09, §§ 44, 47, 55, 60, Մատելլին ընդդեմ Ֆրանսիայի (Matelly v. France) գործով 2014 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, դիմում no. 10609/10, §§ 58, 62, 75:

Եվրոպական կոմիտեն շեշտում է, որ այս կանոնը միավորումների ազատության sine qua non (էական) բաղադրիչն է և կիրառելի է բոլոր աշխատողների, այդ թվում՝ ոստիկանների նկատմամբ¹⁶:

Եվրոպական կոմիտեի մեկնաբանմամբ՝ ոստիկանության ծառայողների՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքի արգելքը չի կարող հետապնդել Եվրոպական խարտիայի Է (G) հոդվածով նախատեսված որևէ իրավաչափ նպատակը, և չի կարող անհրաժեշտ համարվել ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության ապահովման համար:

Նմանապես, անդրադառնալով զինծառայողների միավորումների ազատության սահմանափակմանը, Եվրոպական կոմիտեն արձանագրել է, որ թեև զինված ուժերի դեպքում Եվրոպական խարտիան թույլատրում է քննարկվող իրավունքի ավելի լայն սահմանափակումներ, քան ոստիկանության պարագայում, այնուամենայնիվ, այս սահմանափակումները ևս չեն կարող ամբողջությամբ բացառել միավորվելու իրավունքը: Ուստի, ընդունելով հանդերձ, որ զինծառայողների միավորումների ազատության սահմանափակումը հետապնդում է Եվրոպական խարտիայով սահմանված իրավաչափ նպատակները, Եվրոպական կոմիտեն եզրակացնում է, որ նման ընդհանուր (բլանկետային) արգելքների սահմանումը չի համապատասխանում «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ լինելու» պահանջին¹⁷:

Ուղեցույցով ևս նշվում է, որ զինծառայողների միավորումների գործունեությունը կարող է սահմանափակվել՝ սովորաբար ելնելով պետական անվտանգությունից: Միաժամանակ, չնայած թույլատրելի սահմանափակումներին՝ զինվորական անձնակազմի միավորումների ազատությունը պետք է հարգվի:

Ուղեցույցով նշվում է նաև, որ քաղաքացիական ծառայողների, ոստիկանների և զինծառայողների անդամակցությունն արհեստակցական միություններին պետք է

¹⁶ Տե՛ս Ոստիկանության արհեստակցական միությունների եվրոպական խորհուրդն ընդդեմ Պորտուգալիայի (European Council of Police Trade Unions (CESP) v. Portugal) գործով 2002 թվականի մայիսի 22-ի ըստ էության որոշում, բողոք no. 11/2001, §§ 25-26, 28-29, 31:

¹⁷ Տե՛ս Ոստիկանության արհեստակցական միությունների եվրոպական խորհուրդն ընդդեմ Ֆրանսիայի (European Council of Police Trade Unions (CESP) v. France) գործով 2016 թվականի հունվարի 27-ի ըստ էության որոշում, բողոք no. 101/2013, §§ 62-64, 83-86:

դիտարկվի որպես դրական երևույթ, քանի որ դա թույլատրում է վերջիններիս պաշտպանելու իրենց աշխատանքային իրավունքները¹⁸:

Այս առումով հատկանշական է նաև, որ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (այսուհետ՝ ԵԽԽՎ) «Ոստիկանության մասին հայտարարություն» թիվ 690 (1979) բանաձևով նշվում է, որ ոստիկանության ծառայողները պետք է ունենան մասնագիտական կազմակերպությունների ստեղծման, դրանց անդամակցելու և դրանցում ակտիվ դեր ունենալու ընտրություն: Ոստիկանական մասնագիտական կազմակերպության անդամակցելը և դրանում ակտիվ դերակատարում ունենալը չպետք է որևէ ոստիկանի համար բացասական հետևանքների հանգեցնեն¹⁹:

Նախարարների կոմիտեի «Ոստիկանական էթիկայի եվրոպական կանոնների մասին» թիվ Rec(2001)10 հանձնարարականով ևս նշվում ոստիկանության ծառայողների միավորվելու իրավունքի ապահովման անհրաժեշտությունը²⁰:

Ավելին, ԵԽԽՎ «Զինված ուժերի մասնագիտական աշխատակազմի անդամների միավորումների իրավունքը» թիվ 903 (1988) բանաձևով ԵԽԽՎ-ն կոչ է անում Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին զինված ուժերի պրոֆեսիոնալ անդամներին օժտել նորմալ պայմաններում ժողովրդավարական ինստիտուտների շրջանակներում իրենց մասնագիտական շահերը պաշտպանելու նպատակով միավորումներ ստեղծելու, ինչպես

¹⁸ Տե՛ս Միավորումների ազատության վերաբերյալ համատեղ ուղեցույց, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով) և ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ), 2014 թվականի դեկտեմբերի 12-13, կետեր 65, 146, հասանելի՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)046-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)046-e) (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

¹⁹ Տե՛ս Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի «Ոստիկանության մասին հայտարարություն» թիվ 690 (1979) բանաձևի հավելվածի 6-րդ և 8-րդ կետեր, հասանելի՝ <http://www.assembly.coe.int/nw/xml/xref/xref-xml2html-en.asp?fileid=16101&lang=en> (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

²⁰ Տե՛ս Նախարարների կոմիտեի «Ոստիկանական էթիկայի եվրոպական կանոնների մասին» թիվ Rec(2001)10 հանձնարարականի հավելվածի 32-րդ կետ, հասանելի՝ <https://rm.coe.int/16805e297e> (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

նաև դրանց անդամակցելու և դրանց գործունեությանն ակտիվ մասնակցություն դրսևորելու իրավունքով²¹:

Նույնաբովանդակ դրույթ է պարունակում նաև ԵԽԽՎ «Զինված ուժերի մասնագիտական աշխատակազմի անդամների միավորումների իրավունքը» թիվ 1572 (2002) հանձնարարականը, որով ԵԽԽՎ-ն նաև առաջարկում է Նախարարների կոմիտեին անդամ պետությունների կառավարություններին կոչ անել թույլատրելու զինճառայողներին միավորվել ներկայացուցչական կազմակերպություններում, որոնք իրավունք կունենան մասնակցել աշխատավարձի և աշխատանքային պայմանների վերաբերյալ բանակցություններին, ինչպես նաև վերացնել զինճառայողների միավորումների իրավունքի անհարկի սահմանափակումները²²:

Զինճառայողների՝ միավորումների ազատության, ներառյալ՝ արհեստակցական միություններ ստեղծելու իրավունքից օգտվելու կարևորությունը շեշտվել է նաև ԵԽԽՎ «Զինված ուժերի անդամների մարդու իրավունքները» 1742 (2006) հանձնարարականով²³, ինչպես նաև Նախարարների կոմիտեի «Զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին» թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականով²⁴:

Վերոգրյալի լույսի ներքո դիտարկելով խնդրո առարկա սահմանափակումների համարժեքությունը միավորումների ազատության և մասնավորապես՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքի նշանակությանը՝ հարկ ենք համարում արձանագրել հետևյալը.

²¹ Տե՛ս Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի «Զինված ուժերի մասնագիտական աշխատակազմի անդամների միավորումների իրավունքը» թիվ 903 (1988) բանաձևի 8-րդ կետ, հասանելի՝ <https://pace.coe.int/en/files/16314/html> (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

²² Տե՛ս Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի «Զինված ուժերի մասնագիտական աշխատակազմի անդամների միավորումների իրավունքը» թիվ 1572 (2002) հանձնարարականի 5-րդ և 7-րդ կետեր, հասանելի՝ <http://www.assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-EN.asp?fileid=17031&lang=en> (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

²³ Տե՛ս Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի «Զինված ուժերի անդամների մարդու իրավունքները» թիվ 1742 (2006) հանձնարարականի 9-րդ կետ և 10.2 ենթակետ, հասանելի՝ <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17424&lang=en> (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

²⁴ Տե՛ս Նախարարների կոմիտեի «Զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին» թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի հավելվածի 54-55-րդ կետեր, հասանելի՝ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805cf8ef (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

Ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների ծառայողների և զինծառայողների՝ արհեստակցական միություններին անդամակցելու և դրանք ստեղծելու իրավունքի սահմանափակումները կարող են հետապնդել հասարակական կարգի և պետական անվտանգության ապահովման իրավաչափ նպատակները: Միաժամանակ, այդ սահմանափակումները չպետք է հակադրվեն խնդրո առարկա իրավունքի բուն էությանը և զրկեն անձանց այն իրացնելու որևէ հնարավորությունից:

Ի հակադրություն դրան, ինչպես արդեն նշվել է, սույն դիմումի շրջանակներում վիճարկվող դրույթներով սահմանվող արգելքի արդյունքում բացառվում է ոստիկանությունում, զինված ուժերում, ազգային անվտանգության մարմիններում արհեստակցական միությունների ստեղծումը: Որպես այդպիսին, այս արգելքը զրկում է վկայակոչված ծառայողներին պետության հետ աշխատանքային հարաբերություններում կոլեկտիվ պաշտպանությանն ապավինելու հնարավորությունից՝ առավել խոցելի դարձնելով նրանց գործատուի կողմից իրենց աշխատանքային իրավունքների չարաշահման նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքի հիմնական նպատակն աշխատողների իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովումն է՝ կարծում ենք, որ նման սահմանափակումը չի կարող համահունչ լինել իրավունքի բուն էությանը և բխել դրա նպատակներից:

Դիտարկելով այս արգելքի անհրաժեշտությունն ու պիտանիությունը՝ հարկ է նաև արձանագրել, որ արհեստակցական միություններին անդամակցությունն ինքնին որևէ կերպ չի հակադրվում ոստիկանությունում, ազգային անվտանգության մարմիններում ծառայության կամ զինծառայության բնույթին և նպատակներին, ուստի կարծում ենք, որ իրավաչափ նպատակների ապահովումը կարող է իրականացվել նվազ սահմանափակող միջոցների կիրառմամբ, այլ կերպ ասած՝ տվյալ ծառայողների արհեստակցական միությունների գործունեությունը կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, որոնք կբացառեն այդ գործունեության արդյունքում պետական անվտանգության կամ հասարակական կարգի վտանգումը՝ առանց ընդհանուր և բացարձակ արգելքների նախատեսման:

Ուստի, հարկ է արձանագրել, որ խնդրո առարկա կարգավորումներով սահմանվող արգելքը չի ապահովում հասարակական կարգի և պետական անվտանգության պահպանման հանրային շահի և անձանց՝ միավորումների ազատությունն իրացնելու շահի հավասարակշռումը՝ հանրային շահի գերադասման արդյունքում վերացնելով անձանց իրավունքի իրացման որևէ հնարավորությունը:

Ամփոփելով, կարծում ենք, որ խնդրո առարկա սահմանափակումների նախատեսումը չի բխում համաչափության սկզբունքի ապահովման պահանջից, ուստիև՝ դրանք հակասում են ՀՀ Սահմանադրության 45-րդ և 78-րդ հոդվածներին:

բ) Դատախազների, դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների՝ արհեստակցական միություն ստեղծելու և դրան անդամակցելու իրավունքի սահմանափակումը

Ինչպես արդեն նշվեց, արհեստակցական միություն ստեղծելու և դրան անդամակցելու իրավունքն ամրագրող վկայակոչված միջազգային համաձայնագրերից միայն Եվրոպական կոնվենցիան է ուղղակիորեն նախատեսում հանրային ծառայողների (պետական վարչակազմի) նկատմամբ այդ իրավունքի սահմանափակումների նախատեսման հնարավորությունը: Մնացած բոլոր դեպքերում անդրադարձ է կատարվում միայն ուստիկանությանը և զինված ուժերին:

ԱՄԿ կոմիտեն բազմիցս շեշտել է, որ ԱՄԿ N 87 կոնվենցիայի դրույթները հավասարապես տարածվում են բոլոր աշխատողների, այդ թվում՝ հանրային սեկտորի աշխատողների նկատմամբ (բացառությամբ ուստիկանության ծառայողների և զինծառայողների): Մասնավոր և հանրային սեկտորների՝ աշխատողների՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքի որևէ տարբերակումը կոնվենցիայի իմաստով ոչ իրավաչափ է. ԱՄԿ կոմիտեն նման կարգավորումները համարել է խտրական պետական վարչակազմում աշխատողների նկատմամբ:

Պետական վարչակազմի աշխատակիցներն, այսպիսով, պիտի օժտված լինեն նույն իրավունքներով, ինչ մասնավոր կազմակերպություններում աշխատող անձինք և

հնարավորություն ունենան միավորվելու՝ պաշտպանելու համար իրենց աշխատանքային շահերը:

Անդրադառնալով դատավորների և դատախազների՝ արհեստակցական միավորումներ ստեղծելու արգելքի իրավաչափությանը՝ ԱՄԿ կոմիտեն փաստել է, որ նման կարգավորումը հակասում է ԱՄԿ կոնվենցիաներով ամրագրված՝ միավորումների ազատության սկզբունքներին՝ համաձայն որոնց աշխատողները, **առանց փարբերակման**, պետք է ունենան կազմակերպություններ ստեղծելու և իրենց ընտրությամբ դրանց անդամակցելու իրավունք²⁵:

Եվրոպական կոմիտեն, անդրադառնալով Եվրոպական խարտիայի 5-րդ հոդվածով ամրագրված իրավունքի կիրառելիության շրջանակին, նույնպես նշել է, որ **բոլոր աշխատողները, ներառյալ՝ հանրային ծառայողները**, ամբողջությամբ օգտվում են միավորվելու իրավունքից: Այս իրավունքի սահմանափակումները թույլատրվում են միայն ոստիկանության ծառայողների և զինծառայողների դեպքում²⁶:

Դատական համակարգի անկախության հիմնական սկզբունքները՝ ընդունված Հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի 7-րդ կոնգրեսի կողմից, ևս ամրագրում են դատավորների միավորումների ազատությունը: Մասնավորապես, նշվում է, որ դատավորները պետք է ազատ լինեն իրենց շահերի պաշտպանության, մասնագիտական վերապատրաստման խթանման և դատական անկախության պաշտպանության նպատակով ստեղծելու դատավորների միավորումներ և այլ կազմակերպություններ և անդամակցելու այդ կազմակերպություններին²⁷:

²⁵ Տե՛ս Աշխատանքի միջազգային կազմակերպության միավորումների ազատության կոմիտեի որոշումների ժողովածու, վեցերորդ հրատարակություն, 2018, կետեր 334-343, 351-352, հասանելի՝ https://www.ilo.org/wcmsp5/groups/public/--ed_norm/--normes/documents/publication/wcms_632659.pdf (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

²⁶ Տե՛ս Սոցիալական իրավունքների եվրոպական իրավունքների նախադեպային իրավունքի համառոտ ակնարկի հավելված, 2018, կետ 503, հասանելի՝ <https://rm.coe.int/digest-2018-appendix-en/1680939f7e> (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

²⁷ Տե՛ս Դատական համակարգի անկախության հիմնական սկզբունքները, Հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի 7-րդ կոնգրես, 1985 թվականի սեպտեմբերի 6, կետ 9, հասանելի՝ <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/basic-principles-independence-judiciary> (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

Նմանապես, Նախարարների կոմիտեի «Դատավորների մասին. անկախություն, արդյունավետություն և պարտականություններ» թիվ CM/Rec(2010)12 հանձնարարականի համաձայն՝ դատավորները պետք է ազատ լինեն ստեղծելու մասնագիտական կազմակերպություններ, ինչպես նաև անդամակցելու կազմակերպությունների, որոնց նպատակն է երաշխավորել նրանց անկախությունը, պաշտպանել նրանց շահերը և խթանել օրենքի գերակայությունը²⁸:

Ավելին, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 3 կարծիքի համաձայն՝ միավորումների ազատության իրավունքի իրացման շրջանակներում դատավորները կարող են ստեղծել արհեստակցական միություններ և անդամակցել դրանց²⁹:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ է նկատել, որ դատավորների և դատախազների՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքի երաշխավորումը բխում է ոչ միայն ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի պահանջներից, այլև ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի դրույթներից և այլ միջազգային իրավական աղբյուրներից:

Ի տարբերություն ոստիկանության ծառայողների և զինծառայողների՝ դատավորների և դատախազների ծառայողական պարտականությունների և գործառույթների իրականացումը նվազ չափով է անմիջականորեն առնչվում հասարակական կարգի և հատկապես պետական անվտանգության ապահովմանը:

Այսպես, Սահմանադրության 176-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- 1) հարուցում է քրեական հետապնդում,

²⁸ Տե՛ս Նախարարների կոմիտեի «Դատավորների մասին. անկախություն, արդյունավետություն և պարտականություններ» թիվ CM/Rec(2010)12 հանձնարարականի հավելվածի կետ 25, հասանելի՝ <https://rm.coe.int/cmrec-2010-12-on-independence-efficiency-responsibilities-of-judges/16809f007d> (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

²⁹ Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 3 կարծիք՝ ներկայացված Նախարարների կոմիտեին, CCJE (2002), կետ 34, հասանելի՝ <https://rm.coe.int/16807475bb> (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ,

3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը,

4) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները,

5) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ,

6) պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

Միաժամանակ, Սահմանադրության 162-րդ հոդվածի դրույթներից կարող ենք եզրակացնել, որ դատարանների հիմնարար գործառույթն է արդարադատության իրականացումը:

Այս համատեքստում հասկանալի չեն այն հիմքերն ու նախապայմանները, որոնց հաշվառմամբ օրենսդիրը որոշել է սահմանափակել դատավորների և դատախազների՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը: Ընդ որում, նույնիսկ դատավորին և դատախազին օրենսդրությամբ ներկայացվող՝ քաղաքական զսպվածություն և չեզոքություն, ինքնուրույնություն դրսևորելու պահանջներն այս համատեքստում չեն կարող փոխկապակցվել Սահմանադրության 45-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավաչափ նպատակներից որևէ մեկի հետ, քանի որ, ինչպես արդեն նշվել է, արհեստակցական միություններին անդամակցությունը հետապնդում է աշխատողների աշխատանքային իրավունքների և շահերի ներկայացման ու պաշտպանության նպատակը և չի կարող որևէ կերպ խաթարել իր լիազորությունների իրականացման շրջանակներում դատավորի կամ դատախազի ինքնուրույնությունը կամ խախտել վերջիններիս կողմից քաղաքական զսպվածություն և չեզոքություն դրսևորելու պահանջը:

Ուստի, հիմնվելով վերոգրյալի վրա՝ կարծում ենք, որ դատավորների, Սահմանադրական դատարանի դատավորների և դատախազների կողմից արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու բացարձակ արգելքը չի կարող պայմանավորված լինել ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածով սահմանված իրավաչափ նպատակներից որևէ մեկի՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ

բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության պահանջով, ինչից ելնելով էլ հակասում է ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածին:

Այդուհանդերձ, հարկ է նկատել, որ նույնիսկ եթե հաստատված համարենք վերոնշյալ իրավաչափ նպատակներից որևէ մեկի առկայությունը, խնդրո առարկա կարգավորումը միևնույնն է չի համապատասխանի ՀՀ Սահմանադրությանը:

Այս առումով պետք է նկատել, որ սույն դիմումի «ա» ենթակետում տեղ գտած՝ համաչափության սկզբունքի ապահովման վերաբերյալ մեկնաբանությունները կիրառելի են նաև դատավորների և դատախազների իրավունքների սահմանափակման իրավաչափության գնահատման պարագայում:

Այսպես, ինչպես արդեն նշվել է, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ ոստիկանության, զինված ուժերի և պետական վարչակազմի նկատմամբ միավորումների ազատության սահմանափակումները պետք է նեղ մեկնաբանվեն և չպետք է խաթարեն միավորվելու իրավունքի բուն էությունը: Նման սահմանափակումները պետք է պայմանավորված լինեն խիստ հասարակական անհրաժեշտությամբ (pressing social need) և համաչափ լինեն հետապնդվող իրավաչափ նպատակին:

Հիմնվելով աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող՝ միջազգային և եվրոպական այլ փաստաթղթերի վրա՝ Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ «պետության վարչակազմի անդամները» չեն կարող դուրս մնալ Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի կիրառման շրջանակներից. վերջիններիս նկատմամբ կարող են կիրառվել միայն իրավաչափ սահմանափակումներ:

Արձանագրելով, որ արհեստակցական միություններ ստեղծելու իրավունքի բացարձակ արգելքը չի բխում խիստ հասարակական անհրաժեշտությունից՝ Եվրոպական դատարանը եզրակացնում է նման արգելքի՝ Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի հետ անհամապատասխանության մասին³⁰:

³⁰ Տե՛ս Դեմիրը և Բայկարան ընդդեմ Թուրքիայի (Demir And Baykara v. Turkey) գործով 2008 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, դիմում no. 34503/97, Թում Հաբեր Սեն և Չինարն ընդդեմ Թուրքիայի (Tüm Haber Sen and Çinar v. Turkey) գործով 2006 թվականի փետրվարի 21-ի վճիռը, դիմում no. 28602/95:

Վերոգրյալի համատեքստում հարկ է ևս մեկ անգամ նկատել, որ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու արգելքը հանգեցնում է դատավորների և դատախազների արհեստակցական միությունների ստեղծման ու գործունեության անհնարինության՝ զրկելով վերջիններիս իրենց իրավունքների կոլեկտիվ պաշտպանության կարևորագույն միջոցներից: Քննարկվող կարգավորումները, այդպիսով, հակադրվում են միավորումների ազատության, ներառյալ՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքի բուն էությանը և բացառում այդ ազատության կիրառելիությունը նշված խմբերի համար:

Կարծում ենք, որ ազատության իրացման բացարձակ արգելքը պետք է համարվի վերջին միջոց և դրա կիրառման հնարավորությունը դիտարկվի միայն այն դեպքերում, երբ առկա են բավարար, համոզիչ և ծանրակշիռ ապացույցներ, որ նվազ սահմանափակող միջոցները պիտանի կամ բավարար չեն լինի Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Քննարկվող դեպքում օրենսդիրի կողմից փորձ չի արվել կիրառելու իրավունքի իրացմանը նվազ միջամտող, օրինակ՝ արհեստակցական միությունների գործունեությունը որոշակիորեն սահմանափակող միջոցներ, որոնք սակայն ամբողջությամբ չէին բացառի դրանց գործունեությունը:

Ուստիև, կարծում ենք, որ քննարկվող իրավական դրույթները չեն կարող անհրաժեշտ համարվել ՀՀ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար³¹:

Բացի այդ, մեր գնահատմամբ, իրավունքի էությունը խաթարող, վերջինիս իրացումն անհնարին դարձնող նման բացարձակ սահմանափակումը չի կարող համարվել իրավունքի և ազատության նշանակությանը համարժեք, ուստիև՝ չի բավարարում ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված համաչափության սկզբունքի պահանջներին:

5.2. Կրոնի ազատության իրավունքի սահմանափակումների համաչափությունը

³¹ Կարևոր է կրկին շեշտել, որ մեր գնահատմամբ, դատավորների և դատախազների նկատմամբ արգելքի կիրառումը չի հետապնդում ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրավաչափ նպատակներից որևէ մեկը: Միաժամանակ, դիմումի այս հատվածում մեկնաբանությունները ներկայացվում են հիմնավորելու համար, որ նույնիսկ այդպիսի նպատակի առկայության դեպքում քննարկվող սահմանափակումը չի կարող համարվել իրավաչափ, ուստիև, ձևականորեն հաստատված է համարվում իրավաչափ նպատակներից որևէ մեկի առկայությունը:

Նախ և առաջ հարկ է նկատել, որ վիճարկվող դրույթներով ազգային անվտանգության մարմինների ծառայողին արգելվում է լինել որևէ կրոնական կազմակերպության անդամ, իսկ զինծառայողին՝ ստեղծել կրոնական միավորումներ:

Այս սահմանափակումներն առնչվում են ինչպես միավորումների ազատությանը, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածով երաշխավորվող մտքի, խղճի և կրոնի ազատությանը, որն ամրագրված է նաև Եվրոպական կոնվենցիայի 9-րդ և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 18-րդ հոդվածներով:

Եվրոպական դատարանը բազմիցս արտահայտել է դիրքորոշում առ այն, որ մտքի, խղճի և կրոնի ազատությունը ժողովրդավարական հասարակության հիմնաքարերից է, որի վրա հիմնվում է ժողովրդավարության անբաժան բաղադրիչը հանդիսացող բազմակարծությունը:

Եվրոպական դատարանը նշել է, որ չնայած նրան, որ կրոնական ազատությունը գլխավորապես առնչվում է անհատի գիտակցությանը, այն նաև ենթադրում է կրոնի ազատության արտահայտումը՝ ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ: Քանի որ կրոնական համայնքներն ավանդաբար գոյություն ունեն կազմակերպված կառույցների տեսքով, Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի 11-րդ հոդվածի համատեքստում, որը պաշտպանում է միավորումների տեսքով կյանքը պետության անհիմն միջամտությունից: Այս առումով կրոնի ազատության իրավունքը ներառում է նաև հավատացյալների ակնկալիքը՝ ազատորեն, առանց պետության հայեցողական միջամտության միավորումներ կազմելու: Եվրոպական դատարանն արձանագրել է, որ իրապես, կրոնական համայնքների ինքնավար գոյությունը ժողովրդավարական հասարակության մեջ բազմակարծության անհրաժեշտ պայման է և, այդպիսով, 9-րդ հոդվածի պաշտպանության հիմքում ընկած հարց է³²:

³² Տե՛ս Փրկության բանակի մոսկովյան ճյուղն ընդդեմ Ռուսաստանի (the Moscow Branch of the Salvation Army v. Russia) գործով 2006 թվականի հոկտեմբերի 5-ի վճիռը, դիմում no. 72881/01, §§ 57-58, Մազյար Կերեսզտենի Մեննոնիտա Էգլիազը և այլոք ընդդեմ Հունգարիայի գործով 2014 թվականի ապրիլի 8-ի վճիռը, դիմումներ nos. 70945/11, 23611/12 և այլն, §§ 75, 77:

«Կրոնական կամ հավատքի համայնքների իրավասությունների մասին» Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ համատեղ ուղեցույցի համաձայն՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքը պաշտպանում է կրոնի արտահայտման բազում դրսևորումներ: Կրոնի արտահայտման ազատությունը բաղկացած է երկրպագության, ինչպես նաև կրոնը ուսուցանելու, դավանելու և պահպանելու ազատությունից: Կրոնը դավանելու և ուսուցանելու ազատությունը, ի թիվս այլնի, ընդգրկում է կրոնական խմբերի կողմից սեփական աստիճանակարգությանը և ինստիտուցիոնալ կառուցվածքին համապատասխան միավորումներ կազմելը³³:

Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1506 որոշմամբ ևս կարևորել է պետության կողմից կրոնի ազատության իրացման երաշխավորումը՝ նշելով, որ այս ազատությունն օրենքով իրացնելու արդյունավետ ընթացակարգերի երաշխավորումն ունի ոչ միայն զուտ իրավական նշանակություն, այլև ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության կայացման ու զարգացման կարևոր նախապայման է:

Հարկ է ևս մեկ անգամ նկատել, որ վկայակոչված որոշման շրջանակներում Սահմանադրական դատարանը, քննարկելով «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքով ոստիկանության ծառայողների համար նախատեսված՝ կրոնական կազմակերպություններին անդամակցելու արգելքը, կարևորել է այն հանգամանքը, որ ի տարբերություն միավորման տարատեսակ հանդիսացող կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու հիմնական իրավունքի, որի դեպքում Սահմանադրությամբ ուղղակիորեն նշվում է այն սուբյեկտային շրջանակը, որի համար այդ իրավունքը սահմանափակվում է (դատավորներ, դատախազներ և քննիչներ), ինչպես նաև սուբյեկտային կազմը, որի համար այդ իրավունքը կարող է օրենքով սահմանափակվել (զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողներ), կրոնական կազմակերպությանն անդամակցելու որևէ հատուկ՝ սուբյեկտային սահմանափակում Սահմանադրությունում ամրագրված չէ:

³³ Տե՛ս Կրոնական կամ հավատքի համայնքների իրավասությունների մասին համատեղ ուղեցույց, Վենետիկի հանձնաժողով և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, 2014, կետեր 12, 15, հասանելի՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)023-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)023-e) (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

Վերոնշյալի հիման վրա Սահմանադրական դատարանը եզրակացրել է, որ կրոնական կազմակերպություններին անդամակցելը՝ որպես կրոնի ազատության արտահայտման ձև և միաժամանակ միավորման ազատության իրականացման եղանակ, **կախված չէ որևէ ռազմականացված մարմնում ծառայելու փաստից, այդ թվում՝ ոստիկանությունում:** Ուստի, սուկ ոստիկանությունում ծառայելու փաստն ինքնին չի կարող լինել կրոնական կազմակերպությանն անդամակցության արգելքի հիմք:

Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ ոստիկանությունում ծառայողների քաղաքական չեզոքությունը կարող է ապահովվել օրենքով ամրագրված տարբեր ինտենսիվությամբ սահմանափակումներ սահմանելու միջոցով և անպայմանորեն չպետք է ձևակերպվի առավել խիստ միջոցի՝ արգելքի ընտրությամբ:

Սահմանադրական դատարանը ևս փաստել է, որ կրոնական կազմակերպություններին անդամակցելը, այլոց հետ կրոնական միություն կազմելը կրոնական համոզմունքներն արտահայտելու ազատության բաղադրիչն են:

Վերլուծելով «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթները՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «կրոնական կազմակերպության անդամ» եզրույթը, ըստ օրենսդրական կարգավորման տրամաբանության, չունի իրավական այնպիսի բովանդակություն ու նշանակություն, որն **ինքնին հիմք կհանդիսանար կրոնական համոզմունքներ ունեցող անձ-հանրային ծառայողի պաշտոնեական գործունեությունը հանրային ծառայության տվյալ բնագավառում անհամատեղելի որակելու համար:**

Հաստատված համարելով, որ ոստիկանության ծառայողի կողմից կրոնական կազմակերպությանն անդամակցելն ինքնին չի կարող աղերսվել հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, իսկ պետական անվտանգության պաշտպանության տեսանկյունից կարող է խնդրահարույց լինել միայն առանձին կրոնական կազմակերպությունների դեպքում (որոնց գործունեությունը կասեցվել կամ արգելվել է դատարանի որոշմամբ կամ որոնք ստեղծվել են ոչ իրավաչափ կերպով և այլն)՝ Սահմանադրական դատարանը եզրակացրել է, որ ոստիկանության ծառայողի կրոնի

ազատությունը կարող է սահմանափակվել միայն այն դեպքում, երբ խոսքը գնում է այնպիսի կրոնական կազմակերպությանն անդամակցության մասին, որն իր անդամների համար սահմանում է ոստիկանության ծառայողի պարտականությունների կամ ծառայության շահերի հետ անհամատեղելի պարտականություններ:

Սահմանադրական դատարանը հատուկ շեշտել է, որ **հիշյալ իրավական դիրքորոշումը վերաբերելի է նաև հանրային ծառայության այլ բնագավառներին**, ինչպես նաև մասնավոր իրավահարաբերությունների շրջանակներում աշխատանքային գործունեությանը:

Մնացյալ դեպքերում կրոնական կազմակերպությանն անդամակցելը չի կարող սահմանափակվել, առավել ևս արգելվել a priori՝ օրենքով՝ զուտ հանրային ծառայության տեսակի առանձնահատկությունների բերումով:

Սահմանադրական դատարանը շեշտել է նաև, որ ցանկացած հանրային ծառայող իր ծառայողական գործառույթները կատարելիս պարտավոր է պահպանել կրոնական, դավանաբանական չեզոքություն, ինչը սակայն կարող է ապահովվել կրոնի ազատությունը նվազ սահմանափակող միջոցներով՝ ի համեմատություն սահմանված բացարձակ արգելքի:

Վերոգրյալի համատեքստում դիտարկելով «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված՝ կրոնական կազմակերպությանն անդամակցելու արգելքը՝ հարկ է արձանագրել հետևյալը.

«Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ազգային անվտանգության մարմինները Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման համակարգի բաղկացուցիչ մասն են և իրենց իրավասության սահմաններում ապահովում են անձի, հասարակության ու պետության անվտանգությունը:

Վերոգրյալի հիման վրա կարող ենք արձանագրել, որ ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը պետական անվտանգության ապահովմանն ուղղված ծառայություն է, ուստի, նկատի ունենալով նաև, որ այն համարվում է նաև զինվորական

ծառայություն³⁴, օրինաչափ է թվում ծառայության այս տեսակի դեպքում մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքների որոշակի սահմանափակումների նախատեսումը: Բացի այդ, որպես հանրային ծառայության տեսակ³⁵, ակնկալելի է ծառայողների կողմից զսպվածության (այդ թվում՝ քաղաքական և կրոնական) և գործատուի, սովյալ դեպքում՝ պետության նկատմամբ որոշակի հավատարմության դրսևորումը³⁶:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ կրոնական կազմակերպությանն անդամակցելու իրավունքը ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվող կրոնի ազատության արտահայտման հիմնարար բաղադրիչն է, առանց որի էականորեն խաթարված կլինի այդ իրավունքի բուն էությունը: Այն նաև միավորումների ազատության դրսևորման տեսակ է, որի իրացումը սովյալ դեպքում ոչ թե պարզապես սահմանափակված է, այլ ամբողջովին արգելված է: Արդյունքում, ազգային անվտանգության մարմիններում ծառայողները զրկված են կրոնական կազմակերպություններին անդամակցելու իրենց իրավունքի՝ որպես միավորումների ազատության դրսևորման իրացման որևէ հնարավորությունից:

Սույն դիմումում արհեստակցական միություններին անդամակցության արգելքի շրջանակներում արդեն իսկ քննարկման առարկա է դարձել իրավունքի բուն էությունը խաթարող և իրավունքն իմաստազրկող սահմանափակումների իրավաչափության հարցը և արձանագրվել է, որ նման սահմանափակումները պահանջում են ծանրակշիռ հիմնավորումների առկայություն և որպես կանոն չեն բխում սահմանադրական կամ կոնվենցիոն իրավունքի նշանակությունից:

Քննարկվող դեպքում ևս, մեր գնահատմամբ, չի կարող հաստատված համարվել, որ ազգային անվտանգության մարմիններում ծառայությունն ինքնին անհամատեղելի է կրոնական կազմակերպությանն անդամակցության հետ, կամ որ ծառայողի կողմից ցանկացած կրոնական կազմակերպությանն անդամակցությունը կարող է դիսկեր պարունակել պետական անվտանգության պաշտպանության իրավաչափ նպատակի ապահովման տեսանկյունից:

³⁴ Տե՛ս «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մաս:

³⁵ Տե՛ս «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մաս:

³⁶ Տե՛ս Սլովակիայի Հանրապետության ոստիկանության արհեստակցական միությունը և այլոք ընդդեմ Սլովակիայի գործով 2012 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, դիմում no. 11828/08, § 57:

Այս եզրահանգումը բխում է նաև Սահմանադրական դատարանի վկայակոչված որոշումից, որով հատուկ շեշտվել է ոստիկանությունում ծառայության վերաբերյալ տեղ գտած մեկնաբանությունների կիրառելիությունը նաև հանրային ծառայության այլ տեսակների նկատմամբ:

Ուստի, ինչպես ոստիկանությունում ծառայության պարագայում, տվյալ դեպքում ևս ազգային անվտանգության ծառայողների կողմից զսպվածություն, քաղաքական չեզոքություն դրսևորելուն և պետական անվտանգության ապահովման իրավաչափ նպատակին կարելի է հասնել նվազ սահմանափակող միջոցների կիրառման միջոցով, որոնք ամբողջությամբ չեն բացառում կրոնական կազմակերպություններին անդամակցելու իրավունքի իրացման հնարավորությունը, ուղղված են ծառայողների օրինաչափ վարքագծի ապահովմանը և չեն թիրախավորում բացառապես անձի կրոնական ինքնությունը:

Ավելին, «Ազգային անվտանգության ծառայության մասին» օրենքով արդեն իսկ նախատեսվել են նման միջոցներ, որոնք, մեր գնահատմամբ, անհրաժեշտ և պիտանի կարող են լինել վերոնկարագրյալ հանրային շահերի պաշտպանության տեսանկյունից: Այսպես, օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողն իրավունք չունի պաշտոնեական դիրքն օգտագործել ի շահ կուսակցությունների, կրոնական, հասարակական միավորումների և դրանց գործունեության օգտին իրականացվող քարոզչության:

Կարծում ենք, որ կրոնի ազատության արտահայտման սահմանափակման տեսանկյունից առավել կարևոր է հենց նման կարգավորման նախատեսումը, որն ուղղված կլինի ծառայողական լիազորություններն ու իշխանությունը չարաշահելու դեպքերի կանխմանը. նման կարգավորման առկայության պարագայում առավել անհասկանալի են սույն դիմումի առարկա դրույթի նախատեսման նպատակն ու անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ է արձանագրել, որ ազգային անվտանգության մարմիններում ծառայողների համար սահմանված՝ կրոնական կազմակերպություններին անդամակցելու բացարձակ արգելքը չի կարող բխել պետական անվտանգության պաշտպանության իրավաչափ նպատակից, ինչպես նաև համահունչ չէ կրոնի ազատության

և միավորումների ազատության նշանակությանն ու բուն էությանը, ուստիև՝ հակասում է ՀՀ Սահմանադրության 41-րդ և 45-րդ հոդվածներին:

Անդրադառնալով գինձառայողների համար նախատեսված՝ կրոնական միավորում ստեղծելու արգելքին՝ հարկ է նախ նկատել, որ միավորումների ազատության կարևոր դրսևորումներից է միավորում ստեղծելու իրավունքը: Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները հանգում են նրան, որ այլ անձանց հետ համատեղ հետաքրքրության ոլորտում միասնական գործունեություն ծավալելու համար կազմակերպություն ստեղծելու իրավունքը միավորումների ազատության կարևոր ասպեկտներից մեկն է, առանց որի այդ ազատությունը զրկված կլինի որևէ իմաստից³⁷:

Այս արգելքի իրավաչափությունը գնահատելու համար պետք է նախ անդրադառնալ Օրենքի իմաստով «կրոնական միավորում ստեղծել» արտահայտության նշանակությանը:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ կրոնական կազմակերպությունը հավատի համատեղ դավանության, ինչպես նաև կրոնական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված քաղաքացիների միավորում է³⁸: Կրոնական կազմակերպություններ են եկեղեցական ու կրոնական համայնքները, թեմերը, վանքերը, կրոնական միաբանությունները, նրանց կրթական ու հրատարակչական հաստատությունները և այլ կրոնական-եկեղեցական հիմնարկներ:

Օրենքի 5-րդ հոդվածով սահմանվում են այն պահանջները, որոնք բավարարելու դեպքում միայն քաղաքացիների խումբը կարող է ճանաչվել կրոնական կազմակերպություն, իսկ 14-րդ հոդվածով կարգավորվում է կրոնական համայնքը կամ կազմակերպություն իրավաբանական անձ ճանաչելու ընթացակարգը, որի համար այն պետք է ստանա պետական գրանցում:

Օրենքի դրույթների վերլուծության արդյունքում հարկ է նկատել, որ այնքան էլ պարզ չէ՝ ինչ է պետք հասկանալ «Զինվորական ծառայության և գինձառայողի կարգավիճակի

³⁷ Տե՛ս Գորզելիկը և այլք ընդդեմ Լեհաստանի (Gorzelik and Others v. Poland) գործով 2004 թվականի փետրվարի 17-ի վճիռ, դիմում no. 44158/98, § 88:

³⁸ Օրենքում բառացիորեն չի օգտագործվում «կրոնական միավորում» արտահայտությունը, սակայն կարծում ենք՝ տվյալ դեպքում «միավորում» և «կազմակերպություն» տերմինների իմաստները նույնանում են և վերջիններս կարող են օգտագործվել միմյանց փոխարեն:

մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում տեղ գտած «կրոնական միավորում ստեղծել» արտահայտության տակ: Մասնավորապես, Օրենքը չի սահմանում կրոնական միավորման կամ կազմակերպության ստեղծման ընթացակարգ, հասկանալի չէ՝ արդյոք խոսքն ինքնին կրոնական համայնք հիմնելու մասին է, թե պարզապես կրոնական կազմակերպությունը որպես իրավաբանական անձ գրանցելու համար դիմում ներկայացնելու:

Հարկ է նկատել, որ այս առումով Օրենքի դրույթները բավարար հստակ չեն և կարող են տարընկալումների տեղիք տալ, ինչի մասին են վկայում նաև Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ՝ Օրենքի վերաբերյալ մեկնաբանությունները: Այսպես, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Բարեգործության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ համատեղ կարծիքում նշվում է, որ թեև Օրենքով ուղղակիորեն չի արգելվում առանց գրանցման կրոնական կազմակերպությունների գոյությունը, միաժամանակ, Օրենքի դրույթներից պարզ չէ՝ արդյոք կրոնական կազմակերպության գրանցումը պարտադիր է, և ինչ հետևանքներ են վրա հասնում չգրանցվելու դեպքում: Այս առնչությամբ կարծիքում շեշտվում է, որ անհատները և խմբերը պետք է ազատ լինեն դավանելու իրենց կրոնը առանց պարտադիր գրանցման³⁹:

Այնուամենայնիվ, Օրենքի դրույթներից թերևս բխում է, որ կրոնական կազմակերպությունն այդպիսին համարվելու նպատակով չպետք է ստանա գրանցում, և

³⁹ Տե՛ս «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Բարեգործության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ համատեղ կարծիք, 2010, կետեր 73, 78-81, հասանելի՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)054-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)054-e) (անգլերեն, դիտված՝ 08.08.2022թ.):

գրանցման ստացումը միայն վերջինիս որպես իրավաբանական անձ ճանաչելուն և դրանից բխող իրավասությունները ձեռք բերելուն ուղղված ընթացակարգ է:

Այսպես, Օրենքի 4-րդ հոդվածը կրոնական կազմակերպության հասկացությունը բացահայտելիս նշում չի պարունակում այդ կազմակերպության գրանցված լինելու մասին, իսկ 14-րդ հոդվածում նշվում է, որ **կրոնական կազմակերպությունը ճանաչվում է իրավաբանական անձ** գրանցման պահից: Այդպիսով, երկու դրույթում էլ դեռևս գրանցում չստացած միավորումն անվանակոչվում է որպես «կրոնական կազմակերպություն», ինչից կարող ենք եզրակացնել, որ «կրոնական միավորում ստեղծել» արտահայտությունը բուն միավորման հիմնման մասին է՝ անկախ վերջինիս գրանցման հանգամանքից:

Միաժամանակ, նույնիսկ այս մեկնաբանության դեպքում կանխատեսելի չեն դառնում այն գործողությունները, որոնք «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով կհամարվեն «կրոնական միավորման ստեղծում»: Այսպես, օրենքով արգելված չէ կրոնական միավորմանն անդամակցությունը, ուստի հասկանալի չէ, օրինակ՝ այլ անձանց հետ մինչ այդ գոյություն չունեցող կրոնական համայնքում միավորվելու դեպքում արդյոք կհամարվի, որ զինծառայողը **ստեղծել** է կրոնական միավորում: Այս առումով հասկանալի չէ նաև՝ ինչով է պայմանավորված կրոնական միավորում ստեղծելու արգելքի նախատեսումը, մասնավորապես, արդյո՞ք կրոնական միավորման ստեղծումը ենթադրում է որոշակի սպառնալիքներ և վտանգներ, որոնք առկա չեն արդեն իսկ գոյություն ունեցող կրոնական միավորմանն անդամակցելու պարագայում:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ է նկատել, որ խնդրո առարկա դրույթը խնդրահարույց է ինչպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման, այնպես էլ կրոնի և միավորումների ազատության նշանակությանը ոչ համարժեք սահմանափակման նախատեսման տեսանկյունից:

Այսպես, Սահմանադրական դատարանի իրավական մեկնաբանությունները հանգում են նրան, որ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա

հետ համատեղելու իր վարքագիծը: Օրենքը պետք է լինի հստակ, կանխատեսելի և մատչելի՝ հնարավորություն տալով իրավունքի սուբյեկտներին կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում, ինչպես նաև ողջամիտ սահմաններում կանխատեսելու իր վարքագծի հետևանքները⁴⁰:

Այս համատեքստում հարկ է կրկին նկատել, որ քննարկվող դրույթը բավարար հստակ չէ. այն կանխատեսելի չի դարձնում զինձառայողի այն վարքագիծը, որը կհամարվի «կրոնական միավորման ստեղծում», ուստիև թույլ չի տալիս զինձառայողներին իրենց վարքագիծը հարմարեցնելու իրավական կարգավորմանը և գիտակցելու կրոնի ազատության արտահայտմանն իրենց իրավունքն իրացնելու հետևանքները:

Միաժամանակ, դիտարկելով ՀՀ Սահմանադրության 41-րդ և 45-րդ հոդվածներով երաշխավորվող կրոնի և միավորումների ազատության սահմանափակման համաչափությունը՝ հարկ է նկատել հետևյալը.

Ինչպես սույն դիմումի շրջանակներում քննարկված մյուս կարգավորումների դեպքում, այս պարագայում ևս օրենսդիրի կողմից սահմանվել է կրոնի և միավորումների ազատության էական տարրի՝ այլոց հետ միավորվելու և կրոնական կազմակերպություն ստեղծելու իրավունքի այնպիսի սահմանափակում, որի արդյունքում զինձառայողները զրկվել են իրավունքն իրացնելու որևէ հնարավորությունից:

Միաժամանակ, իրավունքի բուն էությունը խաթարող և այն որևէ իմաստից զրկող կարգավորումները չեն կարող իրավաչափ համարվել: Քննարկվող դեպքում, մեր գնահատմամբ, սահմանված արգելքը չի բխում ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ և 45-րդ հոդվածի 3-րդ մասերով նախատեսված որևէ իրավաչափ նպատակի ապահովման անհրաժեշտությունից. կրոնական միավորում ստեղծելու արգելքը չի կարող պայմանավորված լինել հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Ինչ վերաբերում է պետական անվտանգությանը, այս դեպքում ևս խնդրահարույց կարող է լինել միայն զինձառայողի կողմից ծառայողական դիրքի չարաշահումը՝ կրոնական

⁴⁰ Տե՛ս, օրինակ, Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1488 որոշումը:

կազմակերպության օգտին որոշակի գործողություններ կատարելու նպատակով, կամ պաշտոնեական դիրքը քարոզչության նպատակներով օգտագործելը:

Հենց այս դիսկերի հաշվառմամբ է, որ օրենսդիրն արդեն իսկ «Ձինվորական ծառայության և զինծառայողների կարգավիճակի մասին» օրենքի 43-րդ հոդվածով սահմանել է կրոնական միավորման անդամ հանդիսանալու դեպքում զինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում քարոզչական գործունեություն իրականացնելու, ինչպես նաև պաշտոնեական դիրքն ի շահ կրոնական կազմակերպության օգտագործելու արգելքը:

Այսպիսով, օրենքով արդեն իսկ նախատեսվել են նվազ սահմանափակող, անհրաժեշտ և պիտանի միջոցներ՝ ուղղված զինծառայողի դավանաբանական չեզոքության ապահովմանը:

Այս դրույթները, ուղղված լինելով կրոնական կազմակերպության անդամ զինծառայողի օրինապաշտ գործունեությունը երաշխավորելուն, սահմանափակում են վերջինիս կողմից ապօրինի գործողությունների կատարման հնարավորությունը և չեն խոչընդոտում ծառայողական պարտականությունների իրականացումից դուրս նրա կրոնական համոզմունքների արտահայտմանը, որն ինքնին չի կարող խնդրահարույց լինել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, 31-րդ հոդվածի 1-ին մասով, 68-րդ հոդվածի 2-րդ մասով, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

1. Սույն դիմումն ընդունել վարույթ,

2. Որոշել «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 45-րդ և 78-րդ, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 41-րդ, 45-րդ և 78-րդ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 41-րդ, 45-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանությունն այնքանով, որքանով վիճարկվող դրույթներով սահմանվող՝ զինծառայողների, ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների ծառայողների, դատախազների, դատավորների կողմից արհեստակցական միությանն անդամակցելու, զինծառայողների կողմից նաև կրոնական կազմակերպություն ստեղծելու և ազգային անվտանգության մարմինների ծառայողների կողմից կրոնական կազմակերպությանն անդամակցելու բացարձակ արգելքի սահմանումը ոտնահարում է կրոնի ազատության արտահայտումն ու միավորումների ազատությունը, ներառյալ՝ արհեստակցական միություն ստեղծելու և դրան անդամակցելու իրավունքը:

X

ՔՐԻՍՏԻՆՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ